

## ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 30.05. 2002թ. թիվ 925-ն որոշման կազմակերպության գործունեության առարկան և նպատակն արգելոցի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության բնության ժառանգության գիտական ուսումնասիրության պահպանության պաշտպանության հաշվառման գույքագրման դիտանցի բնության տարեգրության վարման ապահովումն է:

Այդ նպատակով կազմակերպությունը՝

- ապահովում է Ազատ և Վեդի գետերի ավազաններում բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի բնության ժառանգության պահպանությունը կազմակերպում և իրականացնում է դրանց գիտական ուսումնասիրությունը.
- կազմակերպում և իրականացնում է բնական էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների բուսական և կենդանական աշխարհի հաշվառումն ու նախապատրաստում կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը.
- իրականացնում է էկոլոգիական դիտանց վարում բնության տարեգրությունը և կազմակերպում բնության թանգարանի գործունեությունը Թանգարանում պահպանվում ու ցուցադրվում են արգելոցի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի էկոհամակարգերի և դրանց տարրերի վերաբերյալ ցուցանմունքներ հավաքածուներ ու տեղեկատվություն.
- կանխարգելում է մարդու գործունեության հետևանքով արգելոցի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները.
- կազմակերպում է գիտաճանաչողական զբոսաշրջությունն այդ թվում՝ էկոզբոսաշրջություն.
- սահմանված կարգով իրականացնում է հրդեհային անվտանգության միջոցառումներ.
- ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից արգելոցի կանոնադրությամբ սահմանված դրույթների կատարումը.
- իր իրավասության սահմաններում իրականացնում է բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ.
- ծրագրում և կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքներ.
- անդամակցում է միջազգային բնապահպանական կազմակերպություններին մասնակցում միջազգային բնապահպանական ծրագրերին.
- պատրաստում ու հրատարակում է գիտական և գիտաճանաչողական գրականություն ու տեղեկատվական նյութեր.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ

Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- գիտաճանաչողական զբոսաշրջության այդ թվում՝ էկոզբոսաշրջության կազմակերպում.
- գիտական ու գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում.
- բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար նախադրյալների ապահովում.
- էկոլոգիական և գիտաճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.
- արգելոցին վերաբերող գովազդի կազմակերպում.
- տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն.
- արգելոցի պահպանական գոտու տարածքում տարածաշրջանին բնորոշ արժեքավոր հազվագյուտ և անհետացող կենդանիների ու բույսերի տեսակների վերարտադրության կազմակերպում :